ՆԵՐԱՌԱԿԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

Գործնական խորհուրդներ հաշմանդամության թեմայով մեդիա նյութերի մշակման վերաբերյալ:

- Իրավիճակները դիտարկեք մարդու իրավունքների տեսանկյունից և գործի դրեք հանրային կարծիքներն ուղղորդելու Ձեր ներուժը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության համար:
- Կարևորեք անձը, այլ ոչ հաշմանդամությունը: Մի՛ հիշատակեք անձին բացառապես ըստ նրա հաշմանդամության: Ընդգծեք նրա անձնական որակները, նախասիրությունները, աշխատանքային ներուժը և անհատականությունը բնորոշող այլ հատկանիշներ, այլ ոչ հաշմանդամություն ունենալու փաստը:



- Հաշմանդամություն ունեցող անձանց պատկերեք որպես հանրության ակտիվ մաս, այլ ոչ որպես պասիվ կամ կախյալ անձինք:
- Ուշադրություն դարձրեք պատկերներին: Չափազանց հաճախ գործածվող՝ անվասայլակի անիվը պատկերող կադրը նախ շեշտը դնում է հաշմանդամության վրա և մյուս կողմից ստեղծում է կարծրատիպ, որ հաշմանդամություն ունեցող անձինք միայն անվասայլակով տեղաշարժվող անձինք են:
- Ոչինչ մեր մասին՝ առանց մեզ: Ինքնուրույն արտահայտվելու և սեփական կարծիքը բարձրաձայնելու հնարավորություն տվեք հաշմանդամություն ունեցող անձանց: Մի փորձեք խոսել նրանց փոխարեն:
- Խորհրդակցեք համապատասխան կողմերի հետ: Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող կազմակերպությունները և մասնագետները կարող են արժեքավոր տեղեկատվություն տրամադրել դրական լուսաբանում ապահովելու համար:
- Մտածեք կաղապարներից դուրս: Պարտադիր չէ հաշմանդամություն ունեցող անձանց ներառել միմիայն հաշմանդամության թեմայով նյութերում: Ներառական դարձրեք ձեր լրագրողական աշխատանքը՝ հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավելով որպես փորձագետներ, հյուրեր կամ մասնակիցներ ցանկացած թեմայով նյութ պատրաստելիս:

ինչպես ապահովել դրական լուսաբանում և խուսափել խտրական լուսաբանումից:

- **Անտեղի մի՛ հերոսացրեք:** Որոշակի հաջողությունների հասած հաշմանդամություն ունեցող անձանց հերոսացումը տպավորություն է ստեղծում, որ հաշմանդամություն ունեցող անձի համար այնպիսի ձեռքբերումները, ինչպիսիք են բուհ ավարտելը, արվեստով զբաղվելը կամ ընտանիք կազմելը, հերոսական նվաճումներ են, իսկ «ոչ հերոս» հաշմանդամություն ունեցող անձանց բնորոշ է մեկուսացած, պասիվ և անհաջողակ կյանքը:
- **Խուսափե՛ք ոչ իրատեսական սցենարներից:** Այն տարածված սյուժեն, ըստ որի ողնուղեղի վնասվածք ունեցող անձը, ով բժիշկների ոչ հուսադրող ախտորոշումից և անվասայլակին «գամվելուց» հետո կամքի ուժի շնորհիվ ոտքի է կանգնում և սկսում է քայլել, անիրատեսական է և ստեղծում է կարծրատիպ, ըստ որի անվասայլակով տեղաշարժվող անձինք «գամված են մնացել» միմիայն կամքի ուժի բացակայության պատճառով:
- **Բացառե՛ք ողբերգականությունը:** Հաշմանդամության վերաբերյալ կամ հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությամբ տեսանյութերը պետք չէ զուգակցել դրամատիկ երաժշտությամբ, մռայլ պատկերներով կամ սարսուռ առաջացնող ձայնային էֆեկտներով: Այդպիսի լուսաբանումը միայն ամրապնդում է հանրային կարծրատիպերը և իրականում ծիծաղելի է հենց հաշմանդամություն ունեցող անձանց համար:
- **Մի՛ տարանջատեք:** Մի հիշատակեք հաշմանդամություն ունեցող անձանց որպես «ՆՐԱՆՔ»: Այնպիսի արտահայտությունները, ինչպիսիք են «նրանց խնդիրները հուզում են մեզ» և «նրանք նույնպես իրավունքներ ունեն» խիստ խտրական երանգ ունեն:
- **Ապահովե՛ք տեղեկատվության մատչելիությունը:** Ստեղծեք կայքի նյութերի այլընտրանքային՝ խոշոր տառատեսակով տարբերակը: Զուգորդեք կարևորագույն հեռուստահաղորդումները սուրդոթարգմանությամբ: Հնարավորինս մատչելի դարձրեք լրատվամիջոցի շենքը սայլակ օգտագործող անձանց համար:

Կտրականորեն հրաժարվե՛ք հետևյալ մեդիա կերպարներից. հաշմանդամ անձը որպես

- խղճահարության առարկա
- դժբախտությունից չարացած
- հետաքրքրաշարժ տարօրինակություն
- ծաղրի առարկա
- սեփական թշնամին
- ոչ սեքսուալ, «անսեռ» անձ
- անիմաստ պարագաներ կամ աքսեսուարներ կրող անձ (օրինակ՝ ամռան տափին սայլակ օգտագործող անձին չարժե նկարահանել վերմակը ոտքերին գցած, եթե անձն իրականում դրա կարիքը չունի)
- հասարակության բեռ:

ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես խոսել և գրել հաշմանդամություն ունեցող անձանց մասին:

Հաշմանդամություն ունեցող անձ, հաշմանդամ անձ	Սահմանափակ հնարավորություններ ունեցող անձ, հատուկ կարիքավոր, հիվանդ, արատավոր, թերի, անլիարժեք, աննորմալ, ՀՈՒԱ, ԿԱՊԿՈՒ (համապատասխանաբար՝ «հաշմանդամություն ունեցող անձ» և «կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող» արտահայտությունների անընդունելի հապավումներ)
Ոչ հաշմանդամ անձ, հաշմանդամություն չունեցող անձ	Նորմալ, առողջ, լիարժեք անձ (ի հակադրություն հաշմանդամություն ունեցող անձի)
Անվասայլակով տեղաշարժվող անձ, անվասայլակից օգտվող անձ, հենաշարժողական խնդիրներ ունեցող անձ, ողնուղեղի վնասվածք ունեցող անձ	Անվասայլակին գամված, գամվեց սայլակին, սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող անձ
Հաշմանդամություն, ֆունկցիոնալ խանգարում	Արատ, դժբախտություն, թերություն
Պոլիոմիելիտ ունի, պոլիոմիելիտ է տարել, պոլիոմիելիտի հետևանքով հաշմանդամություն ունի	Տառապում է պոլիոմիելիտով կամ պոլիոմիելիտի հետևանքներից, պոլիոմիելիտի զոհ
Մտավոր հաշմանդամություն ունեցող, մտավոր խնդիրներ ունեցող, զարգացման հապաղում ունեցող անձ/երեխա	Թերհաս, մտավոր թերի, տհաս, թերամիտ, դեբիլ, իմբեցիլ, արգելակված

Կիրառեք բառեր և արտահայտություններ, որոնք կարծրատիպեր չեն ստեղծում:	Խուսափեք կարծրատիպային տերմինաբանությունից:
Դաունի համախտանիշ ունեցող անձ	Դաուն, մոնղոլոիդ, դաունով հիվանդ, դաունով տառապող
էպիլեպսիա ունեցող անձ	էպիլեպտիկ, ցնցումավոր
Հոգեկան/հոգեբանական հաշմանդամություն ունեցող անձ, հոգեկան խնդիրներ ունեցող անձ, հոգեկան խանգարում ունեցող անձ	Գիժ, հոգեկան
Տեսողական հաշմանդամություն ունեցող, չտեսնող, վատ տեսնող, թույլ տեսողություն ունեցող անձ, կույր անձ	Կույր (որպես գոյական), լրիվ կույր
Լսողական հաշմանդամություն ունեցող, լսողական խնդիրներ ունեցող, լսողության խանգարում ունեցող, խուլ անձ, թույլ (վատ) լսող անձ	Խուլ-համր, խուլ (որպես գոյական)
Խոսքի խանգարում ունեցող անձ	Համր, կակազող, լալ
Անձնական/մասնագիտական կյանքում հաջողությունների հասած անձ, կայացած անձ	Հերոս, խիզախ, քաջ, հաղթահարող, ոգեշնչող, «առողջ» կամ «նորմալ» մարդկանց համար օրինակ ծառայող

Սույն հրապարակումն իրականացվել է
Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստանի աջակցությամբ:

©2015 «Ունիսոն» ՀԿ